կքն կուսակալին, և յորդորեցին զնա արկանել զվնասն 'ի վերայ վանօրէից. և նորա կոչեալ զթարգմանսն պատուիրեաց նոցա տալ բերել զԲեթղեհէմցիս վասն խնդրոյ այծից, և 'ի չառնուլ նոցա յանձն, առաքեաց ինքն գրով զվնասուրըս ածել զնոսա յԵրուսաղէմ, և նոցա ապստամբեալ ասեն, այս է բնական սովորութիւն մեր. զի թշնամիքն սպանին 'ի մէջն զարս երիս, և մեք զայս գործեցաք, եւ յորո՞ւմ ժամանակի եկեալ իցեմք 'ի քաղաքն վասն դատաստանի. զոն դատաւորք 'ի միջի մերում, առաջի նոցա դատիմք, և դարձուցին զնոսա ունայն յեռս։

Մամեալ Կուսակալին սպառնացաւ 'ի գնալ իւրում 'ի Քեբրոն՝ կործանել զգիւղն, և ունէր ընդ իւր քարտուղար զոմն ազգաւ Ցոյն։ Սորա կոչեալ զթարգմանս Ցունաց եւ Լատինաց ստիպէր զնոսա տալ 2000 դահեկանս, առնուլ նաեւ ինչ 'ի Հայոց, և չիջուցանել զբարկութիւն Կուսակալին։ Իսկ նոքա չառին երբէք յանձն լինել միջամուխ յիրս գիւղականաց։ Եվ կուսակալն բազմութեամբ զօրաց գնալ 'ի Քեբրոն, և Բեթղեհէմցիք պատրաստեցան կազմեալ զինուք. 'ի հասանիլ անդր, խաղացին զօրքն 'ի վերայ գեղջ, և գիւղականք դիմագրաւ ելին ընդ առաջ նոցա, և 'ի հարկանել զմիմեանս, 'ի պարտութիւն մատնեցան գիւղականք և փախուցեալ ամրացան 'ի վանօրայս։ Կուսակալն մատնեաց յաւար զգիւղն զօրականաց իւրոց, եւ առաքեաց զմի ոմն 'ի պաշտօնէից իւրոց յԵրուսաղէմ, ածել անտի զփոխանորդս երից վանաց. զի եթէ ոչ կամեսցին գալ, ինքն կործանեսցէ զվանօրայս նոցա։ Առ այս Հայք ետուն պատասխանի. պատիժն սահմանեալ է միայն ստահակաց, չունիմք զոք անդ ընդդիմակաց նմին, և 'ի բաց խորշիմք յապստամբաց, որք յայտնի են ամենեցուն թէ յորմէ ազգէ իցեն։ Եթէ կամք նորա դրամ առնուլ իցէ, այլով եղանակաւ խնդրեսցէ. զի ոչ կամիմք երբէք արատաւորել զմաքուր անունս մեր առաջի Տէրութեան իբրեւ ապստամբ։ Լատինք և Ցոյնք խոստացան տալ նմա 20 քսակս դրամոց 'ի հոգալ զբանն. և նորա ելեալ գնաց տարեալ ընդ իւր և թնթանօթ մի. և ըստ հաշուի Լատինաց արձակեալ իցէ 180 ռումբս, ընկեցեալ զերիս քարինս յորմոց վանացն Հայոց, և ծակոտիս բացեալ յաշտարակն